

ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 1992—1993 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի հունիսի 24-ին հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի չորս շրջանավարտների ավարտաճառերի պաշտպանություն:

Հանդիսությանը ներկա էին Մայր տաճարի լուսարարապետ գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Շահե արքեպս. Սճեմյանը, Մայրավանքիս միաբանությունը, պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և հյուրեր:

Շրջանավարտների քննիչ հանձնաժողովի կազմում էին՝ հոգևոր ճեմարանի տեսուչ գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաջյանը (հանձնաժողովի նախագահ), հոգևոր ճեմարանի դասախոսներ Տ. Եղիշե ավ. քհն. Սարգսյանը, Պարգև Շահբազյանը և Սամվել Անթոնյանը:

Նախ ընթերցվեց յուրաքանչյուր աշխատանքի վերաբերյալ հանձնաժողովի կողմից կազմված եզրակացությունը, որից հետո յուրաքանչյուր շրջանավարտ հանդես եկավ իր ավարտաճառի բանավոր պաշտպանությամբ և պատասխանեց տրված հարցերին:

Իրենց ավարտաճառերի պաշտպանությամբ հանդես եկան.

1. Տ. Հովհաննես քհն. Շահնազարյան.

Ավարտաճառի թեման էր՝ «Հայ մատենագրության աղբյուրները «Էջմիածին» ամսագրում»:

Աշխատանքը բաղկացած էր 164 մեքենագիր էջերից և ընդգրկում էր հայ մատենագրության զգալի պարունակությունը «Էջմիածին» ամսագրում:

Ներկայացված աշխատանքը գնահատվեց «բավարար»:

2. Վարուժան սրկ. Տերտերյան.

Ավարտաճառի թեման էր՝ «Խորեն Ա Կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը»:

Աշխատանքը բաղկացած էր 130 մեքենագիր էջերից, որտեղ հեղինակը ներկայացրել էր նահատակ Կաթողիկոսի ազգանվեր ու եկեղեցապաշտ գործունեությունը և նրա կյանքի ողբերգական դրվագները:

Ներկայացված ուսումնասիրությունն արժանացավ «գերազանց» գնահատականի:

3. Հարություն սրկ. Սարգսյան.

Ավարտաճառի թեման էր՝ «Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի պատմությունից»:

Ավարտաճառը բաղկացած էր 90 մեքենագիր էջից և ներկայացնում էր Ս Էջմիածնի հոգևոր ճեմարանի պատմությունը՝ 1945—1990 թթ. ընթացքում:

Ներկայացված աշխատանքը գնահատվեց «լավ»:

4. Հակոբ սրկ. Նալբանդյան.

Ավարտաճառի թեման էր՝ «Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը»:

Ուսումնասիրությունը բաղկացած էր 127 մեքենագիր էջերից և իր մեջ բովանդակում էր երջանկահիշատակ Կաթողիկոսի ազգային-եկեղեցական գործունեությունը մեր պատմության ողբերգական տարիներին:

Ներկայացված ավարտաճառը գնահատվեց «գերազանց»:

Ավարտաճառերի պաշտպանությունից հետո սկսվեց հոգևոր ճեմարանի ամավերջի հանդիսությունը, որին իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Հոգևոր ճեմարանի և Հայաստանի Հանրապետության հիմների երգեցողությունից հետո, հոգևոր ճեմարանի երգչախումբը կատարեց Ս. Մեսրոպ Մաշտոցի «Լոյս փառաց» և Ս. Ներսես Շնորհալու «Այսօր երկնայինքն», «Այսօր աղբիւր գիտութեան» շարականները:

Ապա ուսանողության անունից երախտիքի խոսք ասաց Հակոբ սրկ. Նալբանդյանը:

Այնուհետև հոգևոր ճեմարանի Ե լսարանի սան Վազգեն Գալստյանը և Գ լսարանի սան Գեղամ Մարտիրոսյանը արտասանեցին հատվածներ Ս. Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության»-ից: Գ. լսարանի սան Տիգրան Սանոյանն արտասանեց Սիամանթոյի «Ես երգելով կուզեմ մեռնիլ» բանաստեղծությունը: Իսկ Ա. լսարանի սան Արման Գալստյանը դաշնամուրի վրա նվագեց Հայդնի «Մենուետը»: Ապա հոգևոր ճեմարանի երգչախումբը փայլուն կերպով կատարեց Ա. Մայիլյանի «Զուլո» և Գ. Սյունու «Հովն անուշ» երգերը:

Հոգևոր ճեմարանի տարեկան հաշվետվությամբ հանդես եկավ ճեմարանի տեսուչ գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաջյանը: Սրբազան հոր խոսքից հետո կատարվեց ավանդական մրցանակաբաշխությունը, ապա Վեհափառ Հայրապետը հոգևոր ճեմարանի վկայականները հանձնեց ավարտաճառերը պաշտպանած շրջանավարտներին:

Հավարտ հանդիսության իր օրհնության խոսքն ասաց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

Այսօր ես պետք է փառք տամ Աստուծո Ամենակալին, որ իմ բավականին հառաջացած տարիքում ներկա եմ գտնվում Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի ուսումնական տարվա վերջի այս հանդիսավոր նիստին: Ինձ համար միշտ, ամեն տարի, բացառիկ ուրախություն է պատճառում իմ ներկայությունը ձեր մեջ այս հարկի տակ: Դա բնական է, որովհետև հոգևոր ճեմարանի մեջ, մեր երիտասարդ ուսանողների մեջ տեսնում ենք մեր Եկեղեցու ապագան: Եվ դա լուրջ հարց է: Մտահոգություն մի կողմից, ուրախություն՝ մյուս կողմից: Որովհետև մեր Եկեղեցու ապագան կարող է ապահովվել, ամրապնդվել, ծաղկման շրջան ապրել միմիայն նոր սերունդների ապահովումով, նոր սերունդների շնորհակալ աշխատանքով՝ պատվով, կարգապահությամբ և նույնիսկ զոհաբերության ոգով:

Ես նախ ուզում եմ իմ գնահատանքի խոսքն ասել մեր հոգևոր ճեմարանի վերատեսուչ և տեսուչ սրբազան հայրերին, որոնք ամբողջ տարվա ընթացքում ջանք չխնայեցին իրենց պարտքը կատարելու համար ճեմարանի հարկի տակ:

Մեր գնահատանքը և մեր զորակցումը մեր սիրելի դասախոսներին, որոնք նույնպես բարեխղճությամբ և ձեռնհասությամբ դասախոսություններ կարդացին մեր ուսանողներին՝ ջամբելով նրանց հոգևոր ու մտավոր գիտելիքներ, ինչպես նաև բարոյական պատվիրաններ: Մեր գնահատանքը նաև ճեմարանի վերակացու եկեղեցական հայրերին ու պաշտոնեության:

Հույս ունենք, որ հառաջիկա երկու ամիսներից հետո՝ սեպտեմբերին, մենք պիտի կարողանանք նոր տարեշրջանը սկսել նախկին Գևորգյան ճեմարանի շենքի մեջ, որ մեզ վերադարձված է արդեն և սկսված են շինարարական աշխատանքները, ոպեսզի շենքը պատաստ լինի հառաջիկա սեպտեմբերին: Այսպիսով, եթե Աստված մեզ օգնի, երևի կկարողանանք հառաջիկա նոր տարեշրջանի բացումը կատարել Գևորգյան ճեմարանի շենքում, որ բուն հոգևոր ճեմարանի պատմական շենքն է մեզ համար:

Այս առիթով, ինչպես ուրիշ անգամներ, մի քանի խոսք ուզում եմ ուղղել հատկապես մեր սիրելի սաներին, ձեզ, սիրելի երիտասարդներ, որ ուսանում եք այս հարկի տակ: Կարծում եմ, որ տարվե տարի ձեզանից ամեն մեկը ուսանելով այստեղ, սկսում է հասկանալ, թե որտեղ է ինքը գտնվում, և ինչ նպատակի համար է սովորում և ինչ ապագա է սպասում նրան: Այս պատկերացումները պետք է հստակ լինեն ձեզ համար, որպեսզի հետագային հուսախաբություններ չապրեք ո՛չ դուք, ո՛չ էլ մենք: Ես այս բոլորը ուրիշ անգամներ էլ ձեր ուշադրությանը հանձնել եմ:

Դուք եկել եք այստեղ սովորելու միայն մի նպատակով, այն է՝ ապագային հոգևոր ծառայության մեջ մտնելու կա՛մ իբրև կուսակրոն, կա՛մ իբրև ամուսնացյալ քահանա, միևնույնն է մեզ համար: Ուրեմն հոգևոր ծառայության պիտի կոչվեք, և դա հեշտ գործ չէ անշուշտ, նույնիսկ շատ դժվար: Համեմատելով ուրիշ մասնագիտությունների հետ, շատ ավելի դժվար է հոգևոր ծառայության ճանապարհը: Որովհետև եկեղեցին՝ մենք, պահանջկոտ ենք, շատ ավելի պահանջկոտ, քան թե մյուս կրթական հաստատությունները: Նախ սպասում ենք ձեզանից աշխատասիրություն, լավ սովորեք այն առարկաները, որ ավանդվում են ձեզ, և չբավարարվեք միայն ձեր դասախոսի հաղորդած գիտելիքներով, այլ հավելյալ գրքեր կարդաք, որոնք կապ ու-

նեն ձեր գիտելիքների հետ: Մենք բավականին ճոխ գրադարան ունենք, և կարծում եմ, որ պետք է օգտվեք:

Դուք պետք է այստեղ վարժվեք կարդալ սիրել, ստանալու համար ամենօրյա հոգևոր-իմացական սնունդ: Դա շատ կարևոր է, նաև ճեմարանն ավարտելուց հետո, նույնիսկ, երբ հոգևորական լինեք՝ պետք է շարունակեք կարդալ: Այլապես կկանգնի ձեր հոգևոր ապրումների ճանապարհը և այդ կազդի ձեր առաքելության վրա:

Երկրորդ՝ կարգապահություն: Դա էլ մեզ մոտ խիստ կարևոր պահանջմունք է, պայման է, որովհետև մեր Եկեղեցին մի հաստատություն է, որի ծառայողները պետք է նվիրյալ լինեն, պետք է զինվորյալ լինեն: Այսինքն կարգապահ, ինչպես բանակում զինվորներն են, առանց երկմտության ամեն գնով հնազանդվելու վերևից եկած հրահանգներին: Սա նույնպես կարևոր է, և մենք ուշադիր ենք և խստապահանջ նույնիսկ:

Երրորդ՝ նվիրումի ոգի՝ առանց սակարկության: Դժբախտաբար մեր հոգևորականներն ընդհանրապես, որոնք գործում են, ոչ բոլորը գործում են այս ոգով: Եվ երբեմն մեր ժողովուրդը, մեր հավատացյալները դժգոհ են լինում նրանցից իրավամբ: Կան ուրիշներ, որոնք ավելի իրենց հանգիստ են փնտրում, փոխանակ եռանդուն կերպով աշխատելու: Մի խոսքով, նվիրումի ոգու անհրաժեշտությունը խիստ անհրաժեշտ է մեր Եկեղեցու կյանքում:

Մենք պահանջում ենք բոլորից և ձեզանից, որ դուք այդ ոգին սրբությամբ պահպանեք: Հայ հոգևորականը, հայ եկեղեցականը պետք է յինի հոգևոր ֆեդայի:

Ահա թե ինչ ենք սպասում մենք ձեզանից մոտ ապագային: Ովքեր որ տկար են կամ վախկոտ, թող հիմակվանից հեռանան: Ահա ծանրակշիռ հարցեր, որոնք դրվում են ձեր առաջ: Դուք երեխաներ չեք արդեն, դուք հասուն երիտասարդներ եք: Մենք մեր հույսը դրել ենք ձեր վրա, և երանի մեզ հուսախաբ չանեիք և ձեր պարտականությունները լավ կատարեիք մինչև վերջ: Ես նաև հառաջիկա տարիներին, ինչքան կյանք ունենամ, պիտի լինեմ ներկա այս հանդիսություններին՝ ապրելու համար այս ուրախության պահը:

Սիրելի սաներ և ներկաներ, բոլորիդ մաղթում եմ Աստուծո օգնականությունը և Ս. Հոգու շնորհները, մաղթում եմ քաջառողջություն հոգվո և մարմնո: Մաղթում եմ, որ հառաջիկա երկու ամիսներից հետո կրկին հանդիպենք այստեղ, ճեմարանի նոր շենքում, ոգևորությամբ և գուցե ավելի խաղաղ և բարոր պայմաններում: Հուսանք, որ արդարությունը ի վերջո պիտի հաղթանակի, և Ղարաբաղի մեր եղբայրները և քույրերը պիտի կարողանան շարունակել իրենց ազատ և ինքնիշխան խաղաղ կյանքը իրենց պատմական հայրենի հողի վրա, և մենք այստեղ ձեռք-ձեռքի տված պիտի շարունակենք մեր գործը, մեր եկեղեցաշեն, մեր ազգանվեր գործունեությունը:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ». ամեն:

Հանդիսությունն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին արտասանված «Հայր մեր» աղոթքով: